Արձանագրություն N 2

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 ապրիլ 2018թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին
հանձնաժողովի
Նախագահ՝ Թ. Մնացականյան
Անդամներ՝ Ա. Սանթրոսյան
Քարտուղար՝ Լ. Մկրտչյան
Բացակա՝ Ա.Սահակյան

1. **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ**

1.1 Գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1	«Մեդիսար» ՍՊԸ	ք. Երևան, Գետառի 4/9, հեռ. 010 543078

1.2 Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-18»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-18» ծածկագրով մրցույթի մասնակից ընկերության փակ կնքված ծրարով ներկայացրել է.

- դիմում գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու
- հայտարարություն գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին
- տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին
- հայտարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին
- հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին
- գնային առաջարկ

Վերոնշյալ կազմակերպության ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-18» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ / հհ դրամ/

Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են հավելված 1-ում:

2.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 1 չափաբաժնի ներկայացված գինը գերազանցում է նախահաշվային գինը, հանձնաժողովը որոշեց գինը նվազեցնելու նպատակով հրավիրել միաժամանակյա գնային բանակցություններ, որը կկայանա սույն թվականի ապրիլի 18-ին ժամը 12:00-ին ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Դավիթ Մալյան 37 հասցեում:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2 Դեմ՝ 0

3 . Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները՝

Հանձնաժողովի

Նախագահող՝ _____ Թ. Մնացականյան

Անդամներ՝ _____ Ա. Սանթրոսյան

Քարտուղար՝ _____ Լ. Մկրտչյան